Սիրելի հայրենակիցներ,

Ջերմորեն շնորհավորում եմ Հանրապետության օրվա առթիվ:

Ավելի քան հինգ հարյուրամյակ պետականություն կորցրած և ցեղասպանություն ապրած հայ ժողովուրդը 1918 թվականին բազմաթիվ զոհերի ու կորուստների գնով վերականգնեց իր անկախությունն ու պետականությունը՝ հռչակելով Հայաստանի Հանրապետության ծնունդը:

1918-ի Մայիսյան հերոսամարտերի հաղթականակները հնարավորություն տվեցին մեր ժողովրդին հավատալ սեփական ուժերին և հիմնվել ազգային խոհեմության վրա՝ ձևակերպելու պետականության հարատևմանը ուղղված հայեցակարգ:

1991 թվականին վերականգնելով հայոց պետականությունը մենք՝ հայերս ապացուցեցինք, որ արժանի ենք ապրել անկախ և ինքներս ապահովել մեր Հայրենիքի խաղաղությունը:

Մայիսի 28-ի առիթով վերստին շնորհավորում եմ բոլորիս, ցանկանում քաջ առողջություն, խաղաղություն և աներեր հավատ հայ ժողովրդի, Հայոց պետականության վաղվա օրվա հանդեպ: